2019, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (537)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

27 հունիսի **Շարժայի գործադիր խորհրդի պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժայի գործադիր խորհրդի անդամ շեյխ Ֆահիմ բին Սուլթան բին Խալիդ Ալ Քասիմիի եւ Շարժայի կառավարական հարաբերությունների հարցերով վարչության պետ շեյխ Մաջիբ բին Աբդուլլահ Ալ Քասիմիի գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց պատվիրակության այցի առիթով՝ ընդգծելով, որ նմանատիպ այցելություններն իրենց կարեւոր ներդրումն են ունենում երկու երկրների միջեւ սերտ հարաբերություններ ձեւավորելու գործընթացում: Ողջունվեցին այդ ուղղությամբ երկու երկրների դեսպանների կողմից գործադրվող ջանքերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց Արաբական Միացյալ Էմիրությունների, մասնավորապես Շարժայի եւ Հայաստանի միջեւ հաստատված հարաբերությունները, որոնք միջկրոնական եւ միջմշակութային հանդուրժողականության եւ փոխհամագործակցության գեղեցիկ օրինակ են, անդրադարձավ նաեւ վերջերս Շարժա կատարած իր այցին եւ մասնակցությանը Հանդուրժողականության տարվա շրջանակներում կազմակերպված միջկրոնական միջոցառմանը:

Նորին Սրբությունը հաստատեց, որ հայ եւ արաբ ժողովուրդների դարավոր հարաբերությունները հարուստ են հանդուրժողականության եւ եղբայրասիրության ազնիվ դրսեւորումներով: Ասվածի լավագույն օրինակ Հայոց Հայրապետը նկատեց ԱՄԷ-ի գերագույն խորհրդի անդամ, Շարժայի կառավարիչ, Նորին Մեծություն շեյխ դոկտոր Սուլթան բին Մոհամմադ Ալ Քասիմիի կողմից Հաղարծնի վանական համալիրի հիմնանորոգումը: Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ Հաղարծնի վանքում, որը դարձել է միջկրոնական համագործակցության խորհրդանիշ, առաջիկայում կկազմակերպվեն նաեւ միջկրոնական երկխոսության հավաքներ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց Շարժայի կառավարության կողմից հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության, կրոնական-մշակութային արժեքների պահպանման ու վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Իր հերթին՝ Շարժայի գործադիր խորհրդի անդամ շեյխ Ֆահիմ բին Սուլթան բին Խալիդ Ալ Քասիմին, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար, ընդգծեց, որ հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության լավագույն օրինակներից են նաեւ Շարժայում գործող հայկական եկեղեցին եւ հայ համայնքը: Երկրների միջեւ բարիդրացիական հարաբերությունների առանցքային կետը նա նկատեց մշակութային համակեցության եւ կրոնական հանդուրժողականության կամուրջների ստեղծումը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը ջերմ ողջույններ փոխանցեց Նորին Մեծություն շեյխ դոկտոր Սուլթան բին Մոհամմադ Ալ Քասիմիին՝ մաղթելով, որ Շարժան եւ նրա ժողովուրդը մշտապես լինեն Բարձրյալի սիրո եւ օրհնության ներքո:

Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ պատվիրակության այցելությունը Հայաստան արդյունավետ կլինի՝ ծառայելով համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը:

ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սանգվան Յոգեշվարին, որն ավարտում է իր պաշտոնավարումը մեր երկրում:

Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատեց դեսպանի ներդրումը հայ-հնդկական կապերի ամրապնդման գործում: Հայոց Հայրապետը նշեց, որ Հայաստանը եւ Հնդկաստանը ունեն բազմադարյա բարեկամական հարաբերություններ, իսկ

Հնդկաստանում հայ համայնքի պատմությունը հարուստ է բազում գեղեցիկ իրագործումներով ու վկայություններով:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գոհունակությունը հայտնեց Մայր Աթոռի նկատմամբ դեսպանատան կողմից դրսեւորվող ուշադրության, ինչպես նաեւ Կալկաթայում գործող Հայոց մարդասիրական ճեմարանի սաներին ու աշխատակազմին ցուցաբերվող զորակցության համար:

Շնորհակալություն հայտնելով գնահատանքի խոսքերի համար՝ պրն Սանգվան Յոգեշվարը նկատեց, որ Հայաստան-Հնդկաստան հարաբերությունները ներկայումս բարձր մակարդակի վրա են եւ հետագա զարգացման մեծ ներուժ ունեն: Դեսպանը Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստանում եռամյա ծառայության իր տպավորությունները:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեսպանին մաղթեց հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

30 հունիսի **Ֆիլադելֆիայի հայ ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Ֆիլադելֆիա քաղաքից ուխտավորաբար հայրենիք ժամանած հայորդիներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի Ֆիլադելֆիայի Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր սպասավոր Հակոբ քհն. Գեւորգյանի:

Ողջույնի իր խոսքում Հակոբ քահանան տեղեկացրեց, որ ուխտավորների մի մասն առաջին անգամ է Հայաստանում՝ ուրախություն հայտնելով, որ կան մարդիկ, որ երկրորդ, երրորդ անգամ են մասնակցում դեպի հայրենիք ուխտագնացությանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հայրական իր օրհնությունը բերելով ամերիկաբնակ հայորդիներին, ողջունեց սփյուռքի տարբեր համայնքներից ուխտագնացությունների կազմակերպումը՝ ընդգծելով, որ նմանատիպ այցելությունները հայրենիքը տեսնելու եւ ուխտը նորոգելու լավագույն առիթ են: Այդ հարցում Նորին Սրբությունը կարեւոր նկատեց Հայաստանում հասակ առած հոգեւոր սպասավորի առաքելությունը սփյուռքում, որի ծառայության շնորհիվ օտարության մեջ ապրող հայը շարունակում է սնվել ազգային-հոգեւոր արժեքներով:

Գարեգին Բ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ սփյուռքի հեռավոր անկյուններում ապրող իր զավակներն իրենց հայացքներն ուղղել են դեպի հայրենիք՝ պատգամելով նրանց շարունակել զորացնել համայնքի ազգային կյանքը եւ հայրենավեր ծառայությունը՝ եկեղեցու ու մշակույթի միջոցով պահպանելով ազգային ինքնությունը:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ֆիլադելֆիայի հայ ուխտավորներին

Սկիզբը՝ էջ 1

Նորին Սրբությունը նաեւ պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին հոգեւորականների պատրաստությանը, հայրենական կյանքին, Հայաստանին եւ Սուրբ Էջմիածնին իրենց ծառայությամբ օգտակար լինելու ուղիներին: Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքները փոխանցեց ուխտավորներին եւ Ֆիլադելֆիայի հայ համայնքին՝ առանձնակի կերպով գնահատելով նրանց ազգային ոգին ու հավատարմությունը Մայր Եկեղեցու հանդեպ:

2 հուլիսի **«Շարժվելով դեպի ազատություն եւ խաղաղություն» խորագրով քայլերթի կազմակերպիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մահաթմա Գանդիի հիշատակին նվիրված «Շարժվելով դեպի ազատություն եւ խաղաղություն» քայլերթի կազմապերպիչներ Փութան Վեթիլ Ռաջագոփալանին, Աշոկ Սաջանհարին եւ Ջիկ Քար-Հարրիսին՝ ուղեկցությամբ «Գանդի» հիմնադրամի հայաստանյան ներկայացուցիչ Արսեն Խառատյանի:

Հյուրերը Հայոց Հայրապետին ներկայացրեցին քայլարշավի հիմնական գաղափարները եւ նպատակները՝ կարեւորելով կրոնների գործակցությունը մարդկության առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման եւ խաղաղ ու բարօր աշխարհի կերտման գործում: Տիար Աշոկ Սաջանհարին Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ Դելիից մինչեւ Ժնեւ կազմակերպվող մեկամյա քայլերթն անցնելու է նաեւ Հայաստանով ու Արցախով:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց խաղաղության եւ ազատության գաղափարների տարածմանը նվիրված քայլերթի նախաձեռնությունը՝ արձանագրելով, որ այդ գաղափարները դարեր շարունակ ուղեկցել են հայ ժողովրդին, Հայոց Եկեղեցու կողմից հնչեցվել իբրեւ ամենօրյա աղոթք ու մաղթանք:

Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ, որ համամարդկային այդ արժեքները առանձնահատուկ կարեւորություն ունեն հայոց ազգի համար, քանի որ ինչպես պատմության ընթացքում, այնպես եւ այսօր հայ ժողովուրդը պայքարում է խաղաղ եւ ազատ ապրելու իր իրավունքի պաշտպանության համար: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես անդրադարձ կատարեց ղարաբաղյան հակամարտությանը եւ նրա խաղաղ կարգավորմանն ուղղված հոգեւոր առաջնորդների եւ միջազգային հանրության ջանքերին՝ հույս հայտնելով, որ նման խաղաղասիրական նախաձեռնությունները եւս իրենց նպաստը կբերեն աշխարհում եւ հատկապես մեր տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հնդկաստանի հայ համայնքին, հնդկահայոց հոգեւոր ժառանգությանը եւ նրա կարեւոր ներդրմանը երկրի կյանքում եւ հայ-հնդկական կապերի ամրապնդման գործում:

Վերջում Նորից Սրբությունը բարեհաջող առաքելության իր բարեմաղթանքներն ու զորակցությունը փոխանցեց քայլարշավի կազմակերպիչներին:

Մոսկվայի պետական համալսարանի ռեկտորին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիկտոր Սադովնիչիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի: Պրն Սադովնիչին Հայաստան է ժամանել Մոսկվայի պետական համալսարանի երեւանյան մասնաճյուղի առաջին շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողության առիթով:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Մոսկվայի պետական համալսարանի կողմից Հայաստանում իրականացվող կրթական ծրագրերի առնչությամբ՝ շնորհավորելով ՄՊՀ-ի ռեկտորին՝ համալսարանի երեւանյան մասնաճյուղի շրջանավարտների առաջին սերնդի պատրաստման կապակցությամբ: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նշանավոր համալսարանի մասնաճյուղն իր հետեւողական գործունեությամբ մեծապես կնպաստի երկրում կրթության եւ գիտական մտքի զարգացմանը, ինչպես նաեւ կդառնա հայ-ռուսական բարեկամության զորացման կարեւոր օջախներից մեկը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադառնալով հավատակից երկու ժողովուրդների բազմադարյան եղբայրական հարաբերություններին, կարեւորեց Հայաստանի եւ Ռուսաստանի մտավորականության, կրթության, մշակույթի եւ գիտության մշակների գործակցությունը՝ ի նպաստ երկու դաշնակից պետությունների, իշխանությունների ու եղբայրական ժողովուրդների միջեւ փոխըմբռնման ու համագործակցության խորացման:

Իր հերթին ՄՊՀ-ի ռեկտորը, խոսելով համալսարանի երեւանյան մասնաճյուղի կրթական գործընթացի մասին, ուրախություն հայտնեց արձանագրած հաջողության կապակցությամբ՝ կարեւոր նկատելով երիտասարդներին կրթելու առաքելությունը: Տիար Վիկտոր Սադովնիչին Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Մոսկվայի պետական համալսարանի լայնածավալ գործունեությունը՝ անդրադառնալով նաեւ համալսարանի ու Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ առկա սերտ համագործակցությանը:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը հերթական հանդիպման համար՝ ՄՊՀ-ի ռեկտորը վերհիշեց իր այցելությունները Սուրբ Էջմիածին, կարեւոր նկատեց Հայոց Եկեղեցու դերը հայ ժողովրդի միասնության եւ հայկական սփյուռքի պահպանման գործում:

Զրույցի ընթացքում խոսվեց արդի աշխարհի մարտահրավերների մասին, մասնավորապես ընդգծվեց երիտասարդության կյանքում հոգեւոր-բարոյական արժեքների ամրապնդման ուղղությամբ կրթական եւ հոգեւոր հաստատությունների ջանքերի մեկտեղման անհրաժեշտությունը: Այդ առումով կարեւորվեց համալսարանական երիտասարդության հետ տարվող աշխատանքը: Վեհափառ Հայրապետը խոսեց Հայոց Եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերի, մասնավորապես Մայր Աթոռի հովանու ներքո գործող Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման կողմից նախանշվող հոգեւոր-կրթական ծրագրերի մասին:

5 հուլիսի **Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարի մի խումբ մասնակիցների:



Հանդիպմանը «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն, 5-րդ միջազգային բժշկական համագումարի նախագահ, բ. գ. դ. Արմեն Չարչյանը Նորին Սրբությանը ներկայացրեց համագումարի մասնակիցներին՝ տեղեկություններ փոխանցելով համագումարի ընթացքի եւ արձանագրված արդյունքների մասին:

Այնուհետեւ Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց համագումարի կապակցությամբ աշխարհասփյուռ անվանի հայ բժիշկների՝ Հայաստանում մեկտեղվելու առիթով: Հայոց Հայրապետը գովելի եւ խրախուսելի նկատեց նման միջոցառումների անցկացումն ու բժիշկների միջեւ մասնագիտական փորձի փոխանակումը՝ ի նպաստ հայրենիքի առողջապահության ոլորտի բարելավման եւ բժշկագիտության զարգացման:

Շարունակությունը՝ էջ 3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարի մասնակիցներին

Սկիզբը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ համագումարներն առիթ կդառնան աշխարհի տարբեր երկրներում եւ հայրենիքում իրենց ոլորտներում մեծ ձեռքբերումներ արձանագրած հայ բժիշկների ներուժի համախմբմանը եւ դրա ծառայեցմանը ազգի զավակների առողջության պահպանման գործին: Նորին Սրբությունը գոհունակությամբ հաստատեց, որ նման գործակցություն արդեն իսկ ձեւավորվել է եւ բարի պտուղներ տվել Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում եւ այլ բուժ. հաստատություններում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություններ մաղթեց համագումարի աշխատանքներին՝ վստահություն հայտնելով, որ այն կբացահայտի եւ իր աշխատանքներում կընդգրկի նորանոր բժիշկների:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Հայոց Եկեղեցու ներկայիս կացությանը, գործունեությանը, եկեղեցականության պատրաստության ընթացքին եւ իրականացվող ծրագրերին:

7 հուլիսի **Նորաձծ քահանաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում քահանայական ձեռնադրության օծման արժանացած տասներկու նորընծաներին՝ ուղեկցությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն արք. Ադամյանի եւ Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի: Հանդիպմանը նորընծաների հետ մասնակցում էին նաեւ նույն օրը՝ Երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում քահանայական կոչման մեջ վերահաստատված Դավիթ քհն. Քարամյանը, որն իր հոգեւոր ծառայությունը բերելու է ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմում, ինչպես նաեւ Իջման Սուրբ Սեղանի առջեւ կուսակրոն քահանայության ուխտագիրը ստորագրած եւ վեղարի տվչության արժանացած Ասողիկ աբեղա Կարապետյանը:

Ձեռնադրող Սիոն արքեպիսկոպոսը, Նորին Սրբությանը ներկայացնելով նորաթուխ եկեղեցականներին, շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իրեն նման պատվի արժանացնելու համար:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու շնորհավորանքները բերեց արժանապատիվ քահանա հայրերին՝ ուրախություն հայտնելով նրանց ձեռնադրության կապակցությամբ: Գարեգին Բ Հայրապետը նաեւ Տիրոջ զորակցությունը հայցեց Սիոն սրբազանին՝ նույն խանդավառությամբ ու նվիրումով շարունակելու իր առաջնորդական ծառայությունը եւ կատարելու նորանոր ձեռնադրություններ:

Նորաձծ քահանաներին Վեհափառը հիշեցրեց, որ ժողովուրդը սպասում է նրանց եւ 40-օրյա պահեցողությունից հետո նրանք պիտի հովվական ծառայության կոչվեն տարբեր համայնքներում՝ իրենց ողջ գիտելիքն ու կարողություններն ամենայն սիրով ու պատրաստակամությամբ ծառայեցնելով իրենց առաքելության արդյունավորմանն ի նպաստ: Նորին Սրբությունն ընդգծեց, որ եկեղեցում սպասավորությունը ազգին ծառայելու լավագույն ճանապարհն է՝ պատգամելով հովվության մեջ լինել ժրաջան եւ պատասխանատու: Հայոց Հովվապետը, նշելով, որ յուրաքանչյուր հոգեւորական՝ անհատ լինելով հանդերձ, միեւնույն ժամանակ ներկայացնում է եկեղեցու ամբողջությունը, եւ մաղթեց, որ հոգեւոր ծառայությունը միմիայն ուրախություն ու պատիվ բերի նրանց:

Վերջում Պահպանիչ աղոթքով օրհնելով եկեղեցականներին՝ Նորին Սրբությունը վերստին Տիրոջ Ս. Աջի հովանին հայցեց ամենքի համար, մաղթեց արգասավոր ու բարի առաքելություն:

9 հուլիսի **ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ առաջնորդությամբ Բոստոնի Ս. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Առաքել քհն. Ալջալյանի եւ Օլբանիի Ս. Պետրոս եկեղեցու հոգեւոր հովիվ Ստեփանոս քհն. Դուդուկչյանի:

Առաքել քահանան Նորին Սրբությանը ներկայացրեց ուխտավոր հայորդիներին՝ նշելով, որ ուխտավորները եկել են Սուրբ Էջմիածնով իրենց ուխտը նորոգելու եւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալու, որպեսզի դրանով զորացած վերադառնան իրենց համայնքները: Ս. Պետրոս եկեղեցու համայնքի անդամների անունից այցի առիթով իր ուրախությունը հայտնեց Ստեփանոս քահանան:

Այնուհետեւ, հայրական իր օրհնությունը բերելով ամերիկաբնակ հայորդիներին, Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց սփյուռքի տարբեր համայնքներից ուխտագնացությունների կազմակերպումը՝ կարեւորելով այդ գործում սփյուռքում իրենց ծառայությունը մատուցող հոգեւոր սպասավորների դերը:

Անդրադառնալով հայրենիք-սփյուռք անքակտելի կապին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ այսպիսի ուխտագնացություններով սփյուռքի հայորդիները ոչ միայն իրենք են քաջալերվում ու նորոգվում իրենց հավատքի մեջ, այլեւ ոգեշնչում են հայաստանաբնակ ժողովրդին: Վեհափառը վստահեցրեց, որ հայրենիքը զորեղ է սփյուռքով, սփյուռքի իր զավակներով, քանզի հայրենի հողից հեռու գտնվելով հանդերձ՝ նրանք, միեւնույն է, իրենց մեջ կրում են պատասխանատվության զգացում հայրենիքի հանդեպ եւ այդ իմաստով կարեւոր մասնակցություն բերում հայրենիքի կյանքի առաջընթացին:

Նորին Սրբությունը խոսեց նաեւ հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների եւ դժվարությունների մասին, որոնք ինչպես պատմության ընթացքում, այնպես եւ այսօր ժողովուրդը հաղթահարում է Աստծո օգնականությամբ ու զորակցությամբ, Աստծու ընտրյալ ժողովուրդ լինելու հավատքով ու գիտակցությամբ: Նորին Սրբությունը պատգամեց հայորդիներին նույն նախանձախնդրությամբ շարունակել իրենց հայրենանվեր ընթացքը եւ հոգ տանել երիտասարդների հայեցի դաստիարակության համար, որպեսզի որտեղ էլ գտնվեն հայ ժողովրդի զավակները, մշտապես պատասխանատվություն զգան իրենց հայրենիքի եւ հայ ժողովրդի ապագայի համար:

Վերջում Նորին Վեհափառությունն իր գնահատանքը փոխանցեց թեմական առաջնորդին եւ հոգեւոր հովիվներին՝ իրենց ժրաջան ծառայության համար, իսկ ուխտավորներին մաղթեց մշտապես զորանալ իրենց սրբազան հավատքի մեջ եւ Սուրբ Էջմիածնի մշտամնա օրհնությամբ շարունակել կերտել իրենց կյանքն իբրեւ Աստծո հավատարիմ զավակներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց հայորդիներին հուզող հարցերին, որոնք վերաբերում էին եկեղեցականների պատրաստությանն ու ծառայությանը, վերջին տարիներին եկեղեցական կյանքում արձանագրված ձեռքբերումներին, առկա մարտահրավերներին, եկեղեցու սոցիալական ծառայությանը՝ ի նպաստ կարիքավորների եւ միածնաէջ Մայր տաճարի հիմնանորոգության աշխատանքներին:

Տնտեսագիտական համալսարանի մի խումբ ուսանողների

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) ուսանողական խորհրդի անդամների եւ միջբուհական «հաղթանակած» երիտասարդական նախաձեռնության ներկայացուցիչների հետ՝ ուղեկցությամբ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միության (ՀԵՀԵՄ) հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն Թովմա վրդ. Խաչատրյանի:

Հանդիպմանը Թովմա վարդապետը Նորին Սրբությանը տեղեկություններ հաղորդեց ՀԵՀԵՄ-ի եւ ՀՊՏՀ-ի ուսանողական խորհրդի միջեւ ձեւավորված համագործակցության եւ նախանշվող համատեղ նոր ծրագրերի մասին:

Այնուհետեւ երիտասարդները Վեհափառ Հայրապետին հանգամանորեն ներկայացրեցին իրենց գործունեությունը՝ ընդգծելով, որ իրենց առաքելության կարեւորագույն ուղղություններից է նաեւ ազգային գաղափարախոսության տարածումը:

Շարունակությունը՝ էջ 4

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2018-2019 ուսումնական տարվա փակման արարողությունը

Հուլիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2018-2019 ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառումը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՅ եւ Գեւորգյան ճեմարանի օրհներգերը: Այնուհետեւ բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

«Մեր 145-ամյա ճեմարանում հայոց հայրապետների օրհնության ներքո մշտապես կերտվել ու պատրաստվել են այնպիսի անհատներ, որոնց համար ազգն ու Եկեղեցին, դրանց առնչվող յուրաքանչյուր խնդիր դարձել են սեփական: Այսօր էլ մեր ճեմարանը շարունակում է ընթանալ բարի ավանդույթով՝ առաջնորդվելով մեր սաների մեջ ոչ թե պաշտոն փնտրելու, այլ պաշտոն մատուցելու ցանկությունն արմատավորելու սկզբունքով»,– ընդգծեց հայր սուրբը՝ մաղթելով շրջանավարտներին իրենց յուրաքանչյուր քայլն անելուց առաջ հիշել եւ հետեւել Տեր Հիսուս Քրիստոսին նմանվելու Իր իսկ պատգամին:

Այնուհետեւ հայր Գարեգինը ներկայացրեց անցած ուսումնական տարվա գործունեությունը՝ մասնավորապես անդրադառնալով ճեմարանականների մասնակցությանը մշակութային տարբեր միջոցառումներին, բուհական գիտաժողովներին, օտարերկրյա մասնագետների հետ հանդիպումներին, ինչպես նաեւ Կոմիտաս վարդապետի եւ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված հանդիսություններին ունեցած ելույթներին:

Ճեմարանականների մեջ հոգեւոր արժեքների սերմանման մեծ եւ պատասխանատու գործում ներդրման համար՝ հայր սուրբը շնորհակալական խոսք հղեց նաեւ աշխարհական եւ հոգեւորական դասախոսներին, տեսչության անդամներին, վերակացու քահանաներին ու սարկավագներին:

Ավարտելով խոսքը՝ ճեմարանի տեսուչն իր որդիական սերն ու խոնարհումը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ճեմարանի հանդեպ հոգածու վերաբերմունքի եւ հայրական խնամքի համար:

Ապա երաժշտական կատարումներով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Արտաշես Բաբուրյանի:

Ցերեկույթի ընթացքում ներկաներին ողջունեցին նաեւ ճեմարանի դասախոսները՝ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը, ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու Գրիգոր Բրուտյանը, իսկ ուսանողության անունից երախտագիտության խոսքով հանդես եկավ Զ լսարանի սան Գալուստ սրկ. Վարդանյանը:

Հանդիսության ընթացքում կատարվեց նաեւ նվիրաբաշխություն: Նորին Սրբությունն *«Ճեմարանական յուրաքանչյուր ուսումնական շրջանի արդյունավորումը կարեւոր ձեռքբերում է հոգեւորականների պատրաստության գործում եւ գնահատելի գովարժան նպաստ հավատավոր մեր ժողովրդին տերունապատվեր ծառայություն մատուցելու առաքելությանը: ...Մեզ համար հոգեւորականների պատրաստության գործում առաջնային են ոչ միայն ճեմարանի տված հարուստ գիտելիքները, փորձառու եւ հմուտ դասախոսների միջոցով մատուցված իմացությունը, այլեւ դրա հետ մեկտեղ հոգեւոր դաստիարակությունը եւ հոգեւոր կերպարի կերտումը: Հոգեւոր ասպարեզում արժանավորությամբ սպասավորելու, աստվածային շնորհները հավատացյալներին բաշխելու եւ մարդկանց համար քրիստոսանման օրինակ լինելու առաքելության մեջ անօգուտ կլինի իմացության լույսը, եթե չկա հավատքի լույսը, եթե չկան հավատի ապրումը, աղոթքի ոգին ու ջերմեռանդությունը, Աստծո հետ մշտական հաղորդակցության, աստվածային ներկայության բարի զգացումը»,*– նշեց Վեհափառ Հայրապետը՝ հաստատելով, որ հոգեւորականների համար իրենց կյանքով ու գործով ուղենիշ են Սուրբ Եկեղեցու հայրերը, եկեղեցական մեծանուն հեղինակները, որոնք հմուտ էին բնական գիտությունների, լեզուների իմացության, փիլիսոփայության, քերականության, պատմության եւ գիտելյաց այլ բնագավառներում: Նորին Սրբությունը նշեց, որ վերջիններիս մեծությունը կայանում է նրանց կարողությունները հոգեւորով պայծառացնելու, աղոթքներով զարդարելու, մարդկանց հոգիները շահելու, հավատացյալներին դեպի փրկություն եւ հավիտենական կյանք առաջնորդելու նախանձախնդիր սպասավորության մեջ:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գործունեության մեջ ներգրավված են բարձրակարգ, ճանաչված, ծառայանվեր դասախոսներ, որոնք նաեւ ազգասեր եւ եկեղեցասեր, բարեպաշտ անձեր են եւ իրենց վարքով ու հավատավոր ոգով են ձեւավորում, դարբնում ապագա եկեղեցականներին՝ կարեւորելով նաեւ հոգեւորական դասախոսների դերը ճեմարանականների կրթության եւ հոգեկերտման գործում: Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը փոխանցեց ճեմարանի տեսչին, տեսչական ու դասախոսական կազմին՝ հորդորելով նույն նվիրումով, աննվազ նախանձախնդրությամբ շարունակել ամենայն ջանք ու եռանդ ներդնել եկեղեցականների պատրաստության շնորհակալ առաքելության մեջ:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բերելով ճեմարանի սաներին, մասնավորապես ասաց. *«Սիրելի՛ սաներ, շրջանավարտներ, հայրական սիրով ձեզ եւս բերում ենք Մեր հորդորը, որ միշտ նախանձախնդիր լինեք ուսումնառության մեջ, շարունակաբար զարգացնեք ձեր հոգեւոր փորձառությունը, ըմպեք այն առատ աղբյուրից, որ բխեցնում են մեր Սուրբ Եկեղեցու երանելի հայրերն իրենց աշխատություններով, Սուրբ Գրքի ուսուցումներով, բարի ու շահավետ պատգամներով: Մեր շատ գյուղեր ու քաղաքներ, հայաստանյան եւ աշխարհասփյուռ ծուխեր, թեմեր հոգեւորականների կարիքն ունեն եւ փափագով ձեզ են սպասում, որպեսզի դուք, ստանձնելով Քրիստոսի առաքյալը լինելու հանձնառությունը, Ավետարանի լույսը, Տիրոջ կենարար վարդապետությունը, մեր Սուրբ Եկեղեցու սերն ու հոգածությունը տարածեք մեր ժողովրդի մեջ, լինեք Աստծո արժանավոր մշակներ: Մեր ժամանակների բազում նոր մարտահրավերների առջեւ անհրաժեշտ է, որ դուք, աստվածաշնչյան իմաստունի պատգամի համաձայն, սիրեք իմաստությունը եւ հաճույք գտնեք գիտության մեջ, լինեք կորովի ու բանիմաց անձեր, տերունապատվեր սպասավորության ճանապարհին ձեր կարողությունները ծառայեցնեք մեր Սուրբ Եկեղեցու պայծառության եւ հավատավոր մեր ժողովրդի հոգեւոր կյանքի շինությանն ու առաջընթացին»:*

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ երկնավոր Տերն Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի ամենքին եւ նորանոր ձեռքբերումներով բարեզարդի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի առաքելությունը՝ ի փառս Աստծու, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ցերեկույթը փակվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով:

2018-2019 ուսումնական տարում ճեմարանն ունեցել է 82 ուսանող, հաստատությունում դասավանդել է 59 դասախոս: Այս տարի ճեմարանն ավարտեց 16 սան:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Տնտեսագիտական համալսարանի մի խումբ ուսանողների

Սկիզբը՝ էջ 3

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց ՀԵՀԵՄ-ի եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ազգային կառույցների միջեւ առկա կապերի առնչությամբ՝ հաստատելով, որ այդ շփումը հնարավորություն է ընձեռում ուսանողությանը լավագույնս ճանաչելու Հայոց Եկեղեցին: Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Եկեղեցու մասին պատկերացումները հաճախ սահմանափակվում են ծիսապաշտական արարողություններով, մինչդեռ, ըստ Հայոց Հովվապետի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կրողն է հայ ժողովրդի հոգեւոր եւ ազգային մշակույթի հսկայական ժառանգության, որի նպատակն է եղել բոլոր ժամանակներում աստվածաճանաչողությունը հասանելի դարձնել հայորդիներին:

Նորին Սրբությունը վերահաստատեց, որ Հայ Եկեղեցու առաքելությունն է ըստ ամենայնի աջակցել հայ երիտասարդին՝ կանգնելու աստվածաճանաչողության ճանապարհին եւ ընթանալու դրանով՝ հավատարիմ ժառանգորդները լինելով իրենց հայրերի կերտած հոգեւոր ու մշակութային արժեքների:

Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց երիտասարդության հոգիները փոթորկող ժամանակակից մարտահրավերներին եւ տարածվող կործանարար կեղծ գաղափարախոսություններին՝ դրանց հաղթահարման գործում կարեւորելով ինքնաճանաչողությունը, ծանոթությունը Հայոց Եկեղեցու վարդապետությանը եւ քարոզած արժեքներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուսանողների հետ զրուցեց նաեւ հոգեւոր կյանքի նկատմամբ ուշադրության, հաճախակի եկեղեցի այցելելու, աղոթական կյանքով ապրելու անհրաժեշտության եւ լավ ուսանելու կարեւորության մասին:

Վերջում Նորին Սրբությունը երիտասարդ ուսանողներին պատգամեց իրենց ձեռք բերած գիտելիքներն ի սպաս դնել հայրենիքին՝ ապահովելով նրա առաջընթաց ու բարօր կյանքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց «Դեպի Սուրբ Էջմիածին, դեպի սրբազան Արցախ» համահայկական ուխտագնացության մասնակիցներին

Հուլիսի 4-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Դեպի Սուրբ Էջմիածին, դեպի սրբազան Արցախ» համահայկական երիտասարդական ուխտագնացությունը՝ կազմակերպված Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման (ՀԵՀԵՄ) կողմից:

Հուլիսի 4-7-ը Արցախում տեղի ունեցած երիտասարդական հավաքին մասնակցում էր շուրջ 220 եկեղեցասեր երիտասարդ՝ Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր թեմերից:

Ուխտագնացության մեկնարկը տրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելությամբ, որտեղ երիտասարդները Վեհարանի առջեւ ստացան Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու պատգամը:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո ՀԵՀԵՄ հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն Թովմա վրդ. Խաչատրյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ուխտագնացության ծրագիրը՝ տեղեկացնելով, որ աշխարհասփյուռ թեմական կառույցներից երիտասարդներն ուխտավորաբար եկել են Մայր Աթոռ՝ իրենց ուխտի ճանապարհն սկսելուց առաջ ստանալու Հայոց Հովվապետի օրհնությունը:

Ուխտավորներին ողջունեց նաեւ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը՝ ընդգծելով, որ ՀԵՀԵՄ-ը համախմբում է աշխարհասփյուռ հայկական եկեղեցիներն ու համայնքային երիտասարդական կառույցները, մեկտեղում հայ երիտասարդության ներուժը նրա ինքնազարգացման, ազգային եւ հոգեւոր արժեքների պահպանության նվիրական գործում:

«Հոգեւոր առաջնորդների ուղեկցությամբ այս ուխտագնացությունը յուրօրինակ հոգեւոր խորհուրդ է իր մեջ պարունակում, քանի որ դուք եք աշխարհասփյուռ հայության երիտասարդ, կարող, գործունյա ուժը, դուք եք, որ երիտասարդական ավյունով եւ ակտիվությամբ ձեր նպաստը կարող եք բերել հայկական համայնքների զարգացմանը, ձեր հասակակիցների շրջանում քրիստոնեական արժեքների տարածմանը»,– ասաց տիար Զարեհ Սինանյանը՝ վստահություն հայտնելով, որ համահայկական երիտասարդական այս հավաքը կնպաստի նաեւ նրանց առաջնորդական կարողությունների զարգացմանը:

Այնուհետեւ ՀԵՀԵՄ-ի հոգեւոր պատասխանատու, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանն արձանագրեց, որ ներկայում երիտասարդներն անցյալը գալիքի հետ կապող ոսկե կամուրջ են եւ այսօր եկել են վերամկրտվելու Սուրբ Էջմիածնի խորհրդի մեջ, որը հայության ինքնության արմատն է: Սրբազանը հավելեց նաեւ, որ ուխտավորները եկել են ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունը, որպեսզի դրանով գոտեպնդված վերադառնան իրենց համայնքները:

Ապա երիտասարդներին իր պատգամը բերեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով աշխարհասփյուռ հայ երիտասարդներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված տեսնելու առիթով:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ ամենեւին պատահական չէր դեպի Սուրբ Էջմիածին եւ դեպի սրբազան Արցախ ուխտագնացության կազմակերպումը:

«Սուրբ Էջմիածնում է, որ մեր հայրերը ուխտեցին լինել Աստծո սեփական ժողովուրդը եւ պահել հավատարմությունը բոլոր ժամանակներում դեպի մեր Տերը, դեպի մեր երկնավոր Հայրը: Այդ ուխտով մեր հայրերը կերտեցին մեր մշակույթը, մեր փառապանծ պատմությունն ու հաղթանակները: Հայրենիքից հարկադրված հեռանալով՝ նրանք ամենուր հաստատեցին մեր համայնքները՝ հայոց Սփյուռքը, որը դարձավ հայրենիքի անքակտելի ու անբաժան մասը եւ շարունակեց ապրել իր հայացքը ուղղած դեպի Սուրբ Էջմիածին:

Սուրբ Էջմիածնից դուք ուղեւորվելու եք դեպի Արցախ, ինչը նույնպես պատահական չէ: Այս տարի լրանում է Արցախի թեմի հաստատման 30-ամյակը: Երեսուն տարի առաջ էր, որ երանաշնորհ Վազգեն Ա Կաթողիկոսը հռչակեց Արցախի թեմը: Այն օրերին, երբ մեր ժողովուրդը ոտքի էր ելել արցախյան ազատագրական պայքարի, երբ նաեւ ձեզ պես երիտասարդ հայորդիք մեկնում էին Արցախ՝ իրենց կյանքով պաշտպանելու արցախաբնակ մեր զավակների ազատ ու անկախ ապրելու իրավունքը, ուստի, այս իմաստով նույնպես Արցախն այն սրբազան տարածքն է, որտեղ դուք լիարժեքորեն եւ կատարյալ կերպով հնարավորություն կունենաք ձեր ուխտագնացությունն աստվածահաճո դարձնելու համար»,– նշեց Հայոց Հայրապետը՝ վստահություն հայտնելով, որ ուխտավոր հայորդիները Արցախի հերոսական պատմության եւ ժողովրդի մեջ հնարավորություն կունենան ճանաչելու իրենց ինքնությունը եւ վերանորոգելու հայրենանվիրումի եւ եկեղեցասիրության իրենց ուխտը:

Վեհափառ Հայրապետը հաստատեց, որ անհատի համար ուխտագնացությունը լավագույն հնարավորությունն է աստվածճանաչողության եւ ինքնաճանաչողության ճանապարհին եւ մաղթեց, որ այս ուխտագնացության ընթացքում երիտասարդներն ինքնաճանաչողության միջոցով ամրանան աստվածահաճո ընթացքի մեջ եւ ձերբազատվեն Աստծուց հեռացնող բոլոր երեւույթներից:

Բարի երթ մաղթելով ուխտավոր հայորդիներին՝ Ամենայն Հայոց Հայրապետը աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հայցելով, որ Տերը ունկնդիր լինի նրանց խնդրանքներին, նորոգի ու զորացնի Արցախով եւ նրա քաջարի զավակներով:

Քահանայական ձեռնադրություն Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Հուլիսի 7-ին, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն արք. Ադամյանի, քահանայական ձեռնադրության եւ օծման արժանացան Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող տասներկու սարկավագ:

Ս. Պատարագի ընթացքում Սիոն սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ սրբալույս մյուռոնով օծելով քահանաների ճակատներն ու ձեռքերը եւ շնորհելով նրանց հայոց արքաների եւ սրբերի անուններ: Գարեգին սրկ. Սողոմոնյանը վերակոչվեց Աբգար քհն., Հարություն սրկ. Երանյանը՝ Երվանդ քհն., Սարգիս սրկ. Ծատուրյանը՝ Բենիամին քհն., Վոլոդյա սրկ. Նաջարյանը՝ Վարազդատ քհն., Գեւորգ սրկ. Հակոբյանը՝ Արտաշես քհն., Հովհաննես սրկ. Օհանյանը՝ Տրդատ քհն., Լեւոն սրկ. Բաղիրյանը՝ Տիգրան քհն., Հովհաննես սրկ. Գալստյանը՝ Գյուտ քհն., Ստեփան սրկ. Ասատրյանը՝ Արամ քհն., Նարեկ սրկ. Աբրահամյանը՝ Աշոտ քհն., Համբարձում սրկ. Հակոբյանը՝ Վաղարշ քհն. եւ Ռազմիկ սրկ. Դավթյանը՝ Լեւոն քհն.:

Ձեռնադրության ավարտին նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Այնուհետեւ իր քարոզում սրբազան հայրը, խոսելով ձեռնադրության սուրբ խորհրդի եւ քահանայական կոչման մասին, դիմեց նորաօծ եկեղեցականներին՝ մասնավորաբար ասելով. *«Սիրելի նորընծաներ, դուք հաջորդականությունն եք առաքելական շավիղի, երբ Տերը փոխանցեց առաքյալներին, առաքյալներն էլ մեր հայրապետներին եւ այսպես շարունակ մինչեւ այսօր:*

Ձեռնադրության խորհրդով դուք ոչ միայն նոր կյանք, նոր անուն, նոր կոչում եք ստացել, այլ նաեւ նոր հնարավորություններ, նոր իրավունքներ, որովհետեւ դուք պետք է գնաք քարոզելու, հովվելու ձեր ժողովրդին եւ, ինչպես աղոթքի մեջ է ասվում, զգաստ սիրտ թող տա ձեզ Տեր Աստված, որովհետեւ այս նոր ժամանակներում առավել եւս կարիք կա զգաստության, զգոնության, խելամտության եւ ողջախոհության»:

Սիոն արքեպիկոսպոսը կոչ արեց նորաօծ քահանաներին ծառայել հավատքով, սիրով եւ հավատարմությամբ՝ հորդորելով հավատարիմ լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Սուրբ Էջմիածնի միաբանությանը:

Սիոն Սրբազանը ձեռնադրության կապակցությամբ իր շնորհավորանքներն ուղղեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին՝ մաղթելով, որ Նորին Սրբության օրհնության ներքո նորանոր հոգեւորականներ գան ու ծաղկազարդեն Հայ եկեղեցու անդաստանն իրենց անսասանելի, անձանձրույթ աղոթքով եւ ծառայությամբ: Պատարագիչ սրբազանն ի սրտե շնորհավորեց նաեւ Մայր Աթոռի միաբանությանը, նորաօծների ընտանիքների անդամներին եւ համայն հայությանը՝ Հայ Եկեղեցու ծոցում տասներկու նոր մշակների ծննդյան առնչությամբ:

Ապա գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մայր Աթոռի միաբանները եւ ներկա հոգեւորականները բարձրացան սուրբ Խորան, շնորհավորեցին քահանաներին եւ համբուրելով վերջիններիս մյուռոնաբույր ճակատներն ու աջերը՝ ստացան նրանց անդրանիկ «Ողջույն»-ը:

Նորընծա քահանաները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության եւ աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:



«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» կոչին ունկնդիր

Հունիսի 23-ին՝ Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին, հրապարակվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակը՝ Մայր տաճարի հիմնանորոգության ու բարեզարդ պահպանության ի նպաստ մեկնարկող համազգային հանգանակության առիթով:

Մայր տաճարի նորոգության համար նվիրաբերվող օգնությունները համակարգելու նպատակով, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից հաստատվել է աշխատանքային խումբ՝ ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի գլխավորությամբ: Ստեղծվել են նաեւ ազգային բարերարներից եւ թեմերի ներկայացուցիչներից կազմված հոգաբարձուների պատվո հանձնախումբ եւ գործադիր մարմին:

Հուլիսի 3-ին եւ 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ աշխատանքային խմբի երկրորդ հանդիպումը, որը նախագահեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց աշխատանքային խմբի անդամներին՝ կարեւորելով խմբի ստանձնած առաքելությունն ի պայծառություն Մայր տաճարի: Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ Մայր տաճարի խորհրդին հայոց կյանքում՝ ընդգծելով, որ հաճախ Մայր տաճարով են պայմանավորվել հայրենիքի գոյությունը եւ ազգի հարատեւումը: *«Փառք ենք տալիս Աստծուն, որ ունենք Սուրբ Էջմիածինը որպես Աստծո մշտական ներկայություն մեր ժողովրդի կյանքում, որն առաջնորդում է մեզ դեպի փրկություն, դեպի հավերժություն»*,– ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով, որ մեր ժողովրդի զավակներն ամենուր ապրեն Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո եւ փարված մնան Սուրբ Էջմիածնի խորհրդին: Ըստ Հայոց Հայրապետի՝ համազգային հանգանակությունը յուրաքանչյուր հայորդու համար նախ եւ առաջ առիթ է հոգեւոր վերարթնության:

Հանդիպման ընթացքում լսվեցին տաճարի ամրակայման եւ հիմնանորոգության աշխատանքների ընթացքի, ինչպես նաեւ տեղեկատվական-ծանուցողական նյութերի նախապատրաստման ու հրապարակման վերաբերյալ զեկույցներ:

Քննարկվեցին թեմերում հանգանակության կազմակերպման հետ առնչված հարցեր: Տեղեկացվեց, որ թեմերում այդ նպատակով սկսվել է տեղական հանձնախմբերի ձեւավորումը, իսկ առաջիկայում աշխատանքային խմբի պատասխանատու Հովնան արքեպիսկոպոսը հանգանակության աշխատանքների համակարգման նպատակով այցելություններ կկատարի Կանադայի, ԱՄՆ-ի հայոց արեւելյան, Բրազիլիայի, Արգենտինայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Մեծ Բրիտանիայի ու Դամասկոսի հայոց թեմեր եւ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակություն (Վիեննա):

Որոշվեց Ս. Աստվածածնի վերափոխման տոնին՝ Մայր տաճարի նավակատիքի օրը, ձեռնամուխ լինել հանգանակության գործնական ընթացքին: Առաջիկայում կհրապարակվեն նաեւ Մայր տաճարի համար նվիրաբերվելիք գումարների փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայտարարում է մրցույթ՝ Վեհարանի նորոգված շենքի նախասրահի նկարազարդման համար

Մրցույթ N 1

Մրցույթ Վեհարանի նորոգված շենքի նախասրահի նկարազարդման համար՝ «Հայոց Մեծ դարձը» թեմայով.

1. Նկարը պետք է ստեղծել ռեալիստական գեղանկարչության սկզբունքների համաձայն.
2. Իրադարձությունը ներկայացնել Արածանի գետի ափին՝ ըստ Ագաթանգեղոսի նկարագրության (*«Ագաթանգեղոս Հայոց պատմություն», Եր., 1983, էջ 415-427*).
3. Սբ Գրիգոր Լուսավորչին եւ սբ Տրդատ արքային, պետական ավագանուն, զորականներին, հոգեւորականությանն ու ժողովրդին պատկերել Դ դարին բնորոշ զգեստավորմամբ (սբ Գրիգոր Լուսավորչին կարելի է պատկերել նաեւ այսօր կիրառվող հայրապետական զգեստավորմամբ).
4. Տեսարանի մեջ պատկերել թագավորական եւ եկեղեցական նշանակները.
5. Նկարի վերին հատվածը պետք է լինի կիսաշրջանաձեւ, բարձրությունը՝ 315 սմ, լայնությունը՝ 200 սմ, կատարված յուղաներկով, կտավի վրա.
6. Էսքիզը (կամ էսքիզները) պետք է լինի 70x50 սմ.
7. Էսքիզները ներկայացնել գույնով (ըստ ցանկության՝ յուղաներկով, ջրաներկով, ակրիլով եւ այլ նյութերով, կարելի է նաեւ խառը տեխնիկայով).
8. Էսքիզների մրցույթի վերջնաժամկետն է 01 հոկտեմբերի, 2019 թ.
9. Էսքիզները ներկայացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Թանգարանների գրասենյակ (010/517-234).
10. Էսքիզների հետ ներկայացնել ծածկագրի ծրար՝ 5 նիշով: Փակ ծրարի մեջ նշել հեղինակի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը եւ էլեկտրոնային հասցեն: Նույն ծածկագիրը նշվի էսքիզի կամ էսքիզների վրա.
11. Էսքիզի (կամ էսքիզների) համար հայտարարված մրցույթը շահած հեղինակը կստանա իրականացման իրավունք: Ավարտուն աշխատանքի համար կվճարվի 5.000.000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը).
12. Մրցույթը շահած հեղինակի հետ կկնքվի պայմանագիր, որից հետո հեղինակը նախատեսված գումարից կստանա 20% կանխավճար.
13. Ավարտուն աշխատանքի վերջնաժամկետը՝ 10 ապրիլի, 2020 թ.:

Մրցույթ N 2

Մրցույթ Վեհարանի նորոգված շենքի նախասրահի նկարազարդման համար՝ «Տեսիլք Լուսավորչի» թեմայով.

1. Նկարը պետք է ստեղծել ռեալիստական գեղանկարչության սկզբունքների համաձայն.
2. Տեսիլքը ներկայացնել գիշերվա մթության մեջ՝ Վաղարշապատում, թագավորական պալատի մերձակայքում՝ ըստ Ագաթանգեղոսի նկարագրության («Ագաթանգեղոս Հայոց պատմություն», Եր., 1983, էջ 463-467).
3. Սբ Գրիգոր Լուսավորչին պատկերել Դ դարին բնորոշ զգեստավորմամբ (առանց ծիսական հանդերձանքի).
4. Տեր Հիսուս Քրիստոսին պատկերել հայրենի հողին կանգնած եւ ձեռքին լուսաճառագ ուռը, Երկինքը բացյալ՝ Հայր Աստծո եւ Սուրբ Հոգու խորհրդանշական պատկերների (է եւ աղավնի) երեւմամբ.
5. Մայր տաճարը եւ մյուս եկեղեցիները (Սբ Հռիփսիմե, Սբ Գայանե, Սբ Շողակաթ) ներկայացնել այսօրվա ճարտարապետական տեսքով եւ լուսեղեն գծագրությամբ.
6. Նկարի վերին հատվածը պետք է լինի կիսաշրջանաձեւ, բարձրությունը՝ 315 սմ, լայնությունը՝ 200 սմ, կատարված յուղաներկով, կտավի վրա.
7. Էսքիզը (կամ էսքիզները) պետք է լինի 70x50 սմ.
8. Էսքիզները ներկայացնել գույնով (ըստ ցանկության՝ յուղաներկով, ջրաներկով, ակրիլով եւ այլ նյութերով, կարելի է նաեւ խառը տեխնիկայով).
9. Էսքիզների մրցույթի վերջնաժամկետն է 01 հոկտեմբերի, 2019 թ.
10. Էսքիզները ներկայացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Թանգարանների գրասենյակ (010/517-234).
11. Էսքիզների հետ ներկայացնել ծածկագրի ծրար՝ 5 նիշով: Փակ ծրարի մեջ նշել հեղինակի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը եւ էլեկտրոնային հասցեն: Նույն ծածկագիրը նշվի էսքիզի կամ էսքիզների վրա.
12. Էսքիզի (կամ էսքիզների) համար հայտարարված մրցույթը շահած հեղինակը կստանա իրականացման իրավունք: Ավարտուն աշխատանքի համար կվճարվի 5.000.000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը).
13. Մրցույթը շահած հեղինակի հետ կկնքվի պայմանագիր, որից հետո հեղինակը նախատեսված գումարից կստանա 20% կանխավճար.
14. Ավարտուն աշխատանքի վերջնաժամկետը՝ 10 ապրիլի, 2020 թ.:

«Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հուլիսի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված «Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը: Պատվավոր մրցանակն այս տարի շնորհվեց ռուսաստանցի ճանաչված կինոռեժիսոր Ալեքսանդր Մինդաձեին:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո միջազգային կինոփառատոնի մասնակիցներին եւ հյուրերին ողջունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներեկեղեցական բաժնի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանը՝ ներկաներին ծանոթացնելով մրցանակաբաշխության ավանդույթներին եւ այս տարվա մրցանակակրին:

Հյուրերին ողջունեց նաեւ կինոփառատոնի հիմնադիր-տնօրեն Հարություն Խաչատրյանը՝ շնորհակալություն հայտնելով Հայոց Եկեղեցուն եւ Վեհափառ Հայրապետին՝ մշակույթի եւ արվեստի տարածման գործին մշտապես օժանդակելու համար:

Այնուհետեւ այս տարվա մրցանակակրին իր օրհնությունը բերեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բանժի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը՝ բարձր գնահատելով ռեժիսորի վաստակը կինոարվեստում հոգեւոր արժեքների արտացոլման գործում: Սրբազանն ընդգծեց, որ պրն Մինդաձեի արվեստում շեշտադրվում է այն գաղափարը, որ Աստծո արարչության մեջ մարդկային կյանքից առավել արժեքավոր բան գոյություն չունի, եւ նրա ֆիլմերում թեեւ կան շատ հակասական կերպարներ, սակայն արտացոլվում է այն միտքը, որ բոլորն էլ արժանի են կյանք ունենալու պարգեւին:

Այնուհետեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանն ընթերցեց «Եղիցի լույս» մրցանակի հայրապետական վկայագիրը, որով հաստատվում է, որ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում հոգեւոր, մշակութային եւ մարդասիրական արժեքների քարոզչության եւ համաշխարհային կինոարվեստում մեծ վաստակի համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակը 2019 թ. շնորհվում է կինոռեժիսոր Ալեքսանդր Մինդաձեին: Հավարտ վկայագրի ընթերցման՝ Նաթան արքեպիսկոպոսը կինոռեժիսորին հանձնեց «Եղիցի լույս» մրցանակը:

Ցերեկույթին շնորհակալական խոսքով հանդես եկավ մրցանակակիրը՝ մասնավորապես նշելով, որ մրցանակը խթան կհանդիսանա շարունակելու ստեղծել ֆիլմեր հանուն լույսի եւ հանուն մարդու: Ռեժիսորը կարեւորեց նաեւ այն հանգամանքը, որ մրցանակը հաստատումն է այն իրողությունների եւ գաղափարների, որոնց նա ձգտել է ամբողջ կյանքում:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը նկատեց, որ ներկա ժամանակներում կինոարվեստը շարունակում է կարեւոր առաքելություն իրականացնել՝ հանդիսանալով ազդու միջոց տարբեր արժեքների քարոզչության համար:

Այդ կապակցությամբ Նորին Սրբությունը բարձր գնահատեց պրն Մինդաձեի վաստակը՝ կինոարվեստի միջոցով հոգեւոր-բարոյական արժեքների խթանման եւ տարածման, մարդկային կյանքը բարի, ճշմարիտ եւ բարձր արժեքներով լցնելու գործում:

Մրցանակաբաշխության ավարտին համերգային կատարումներով հանդես եկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սարկավագաց երգչախումբը:

Նույն օրը մրցանակակիր Ալեքսանդր Մինդաձեին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ «Եղիցի լույս» մրցանակի հանձնումն առիթ կդառնա նրա ստեղծագործական կյանքում նոր ներշնչանքների եւ օգտաշատ իրագործումների:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

(մարդու ստեղծումն ու ընտանիքի դերակատարությունը)

Սկիզբը՝ թիվ 11

Ինչպես վկայում է Ա. Տեր-Միքելյանը. *«Մարդու ժառանգական բնական սերումն էլ պայմանավորված է կնոջով, որ ստեղծված է տղամարդին հավասար պատվով: Աստուծո հայտնությունը կատարելապես դյուրահասկանալի է դարձնում այդ հավասարությունը նոցա կողակցության գաղափարով, որ միեւնույն ժամանակ պարունակում է յուր մեջ հավասարության հիմնաքար միությունը»* (տես Ծննդ., Բ 21, Մատթ. ԺԹ 4, Գործք. ԺԷ 26):

«Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծվեց»: «... Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան, իշխեցեք... բայց բարու եւ չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետեւ այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» (Ծննդ. Ա 22, 27–28, Բ 17): *«Տեր Աստուած Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մոտ... Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հորն ու մորը, պետք է միանա իր կնոջը, եւ երկուսը պետք է լինեն մի մարմին»* (Ծննդ Բ 22, 24):

Դժբախտաբար մարդը չկամեցավ կամ չկարողացավ գիտակցել իր ազատ կամքի եւ կոչման առավելությունը (Ա Կոր. ԺԵ 45–47), *«Եվ երկուսն էլ՝ Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին ամաչում»* (Ծննդ Բ 25), եւ բաժանվելով Աստծո հետ հաղորդակցությունից՝ ընկան կատարյալ աշխարհասիրության մեջ: Դրա հետեւանքը եղավ այն, որ համայն մարդկության առաջադիմության եւ հարատեւման վարքն ու զարգացումը խաթարվեցին, ինչպես մեկնաբանում է Պողոս առաքյալը. *«Ինչպես որ մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը... մահը թագավորեց Ադամից մինչեւ Մովսես նույնիսկ նրանց վրա, որոնք Ադամի հանցանքի նման հանցանք չգործեցին...» (Հռ. Ե 12, 14): «Այդ անկման մեջ նախամարդը քանի գնում ընկնում էր, զի զորանում էին նորա մեջ հպարտությունն ու մեծամտությունը, եւ նա կարծում էր, թե ինքը կարող էր աշխարհում ամենայն ինչ գիտենալ եւ յուր բախտը կռել. նա դեռ չգիտեր՝ «եթե մեկը կարծում է, թե բան գիտե, դեռ չգիտե իսկ ինչպես պետք է գիտենալ: Բայց ով սիրում է Աստծուն, նա ճանաչվում է նրանից» (Ա, Կոր. Ը 2): Չգիտեր, որ չսիրելով Աստուծուն, կտրվում էր նորա ամենաառատ իմաստությունից եւ մարմնավոր աշխարհի մի օղակը դառնում: Այդ տգիտության հետեւանքն էր, որ նախամարդը թաքնվում էր ամենագետ եւ ամենատես Աստուծուց (տես Ծննդ., Գ 10)..., «զի ինչպես որ արդարությունն ու սրբությունն են անբաժան Աստուծուց, այնպես էլ մեղքն ու տանջանքն (պատիժը) են անբաժան մարդու պատվիրանազանցության մեջ: Մարդու՝ դեպի աշխարհն ունեցած սխալ վերաբերմունքից հառաջացավ այն, որ նա, Աստուծուց կտրված լինելով, ոչ թե ինքնուրույն տեր դարձավ աշխարհի վրա՝ ըստ յուր սպասածին, այլ, ընդհակառակն, նորա գերին, նորանից ակամա կախվածը, նորա մեջ անմխիթար տանջվող, անհույս հառաչող: Աստված էր աշխարհն ստորադրել մարդուն. մարդն էլ, Աստուծուց վտարանջելով, չէր կարող տիրել աշխարհն, այլ ենթարկվեց նորան. նա յուր անհավատությամբ սկսավ ձգտել ոչ թե դեպի Աստված, այլ դեպի աշխարհն, ուստիեւ ոչ թե բարձրացավ, ինչպես սպասում էր, այլ ընկավ անասնական աշխարհի շարքը»*: (Հուդ. ժ 2, Պետր. Բ 12), (Արշակ Տեր-Միքելյան, «Քրիստոնեական»):

Մատամ Թեոդոր (1606–1676), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

Ապա տեսնում ենք, թե ինչպես Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին եւ դաշտային բոլոր գազաններին անուններ է տալիս, բայց չի գտնում իր նմանությունն ունեցող մի օգնականի (տես Ծննդ. 2. 18–24): Հետեւելով աստվածաշնչական տրամաբանությանը՝ Ադամը փնտրտուքի մեջ է. *«Ադամը չգտավ իր նմանությունն ունեցող մի օգնական»:* Այնուհետեւ ականատեսն ենք աստվածային տնօրինության. *«Աստուած հանեց նրա կողոսկրերից մեկը... Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մոտ»:* Ապա ներկա ենք Ադամի արձագանքին՝ *«Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծվեց»:* Եվ վերջապես, Աստված հավանություն եւ օրհնություն է տալիս, ինչպես որ արարչագործության ժամանակ (հմմտ. Ծննդ. Ա 8, 22, 31): Այդ իսկ պատճառով, տղամարդը, թողնելով իր հորն ու մորը, պետք է միանա իր կնոջը, եւ երկուսը պետք է լինեն մի մարմին: Ամենեւին պատահական չէ Պողոս առաքյալի խորախորհուրդ, բազմաձյուղ ու համակողմանի անդրադարձը տղամարդկանց ու կանանց: Ինչպես նաեւ մասնահատուկ ուշադրության է արժանի ուղերձի հանգուցալուծումը. *«Հնազանդվեցեք միմյանց Քրիստոսի երկյուղով: Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպես կհնազանդվեն Տիրոջը... եվ ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես եւ կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում: Մարդի՛կ, սիրեցեք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի ավազանի մաքրությամբ... Նույն ձեւով մարդիկ պարտավոր են սիրել իրենց կանանց իբրեւ իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում. որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում եւ խնամում է այն, ինչպես որ Քրիստոս՝ եկեղեցին. քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից... Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ եկեղեցու վերաբերեալ: Դուք էլ նույնպես ամեն մեկդ նո՛ւյնը արեք, որպեսզի յուրաքանչյուր ոք իր կնոջն այնպես սիրի, ինչպես իր անձը, եւ կինը երկնչի իր մարդուց»* (Եփես. Ե 21–33): Այսպիսով, համադրելով բերյալ սուրբգրային հղումները համատես ավետարանիչների արձանագրումներին *(Մատթ. ԺԹ 5–6, Ղուկ. ԺԶ 17–18)*՝ միանգամայն ակներեւ է դառնում.

ա) Հին եւ Նոր Կտակարանների անլուծանելի կապը,

բ) Արարչագործության մեջ ոչ մի պատահական դրսեւորում չկա,

գ) Արդեն ականատեսն ենք ընտանիքի գոյության,

դ) Եղած եւ լինելիք իրողությունները նորություն են սոսկ հիշողությունը կորցրած մարդկանց համար: Սրա մասին Արշակ Տեր-Միքելյանը բավական ուշագրավ ծանուցում է. *«Դորա հետեւանքն էր, որ մարդը մարմնապես եւս զրկվեց հավերժական աստվածային փառքի վայելքից եւ ապականացու կյանքի կերակուր դարձավ: Այդ կորստական վիճակ էր, որի հիմնական հետեւանքն էր եւ մահը՝ «մեղաց թոշակը» (Հռ., Զ 23), որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ հոգու բաժանվիլը կենդանություն ու երջանկություն տվող Աստուծուց եւ անկումն մարմնավոր ցավերի ու լուծման մեջ»* (Բ Կոր. ԺԱ 3, Ա Տիմ. Բ 14) (Արշակ Տեր-Միքելյան «Քրիստոնեական»):

Մի կարեւոր հանգամանք եւս. թեեւ Ադամն ու Եվան որոշակի առումով «ծնողազուրկ են», մեզ նման չունեն հայր եւ մայր, սակայն նկատելի է վերջիններիս մի դեպքում՝ զավակ լինելու *«...Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն... Տեր Աստված երկրից բուսցրեց նաեւ ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր... եվ երկուսն էլ՝ Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին ամաչում»* (Ծննդ. Ա 29, Բ 8–9, 25), իսկ մյուս դեպքում՝ արդեն որպես չափահաս ու ծնող կարգավիճակը. *«Տեր Աստված Ադամի ու նրա կնոջ համար կաշվից զգեստներ պատրաստեց եւ հագցրեց նրանց. Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց բերկրության դրախտի դիմաց... Ադամը պառկեց իր կին Եվայի հետ, սա հղիացավ, ծնեց Կայենին ու ասաց. «Մարդ ծնեցի Աստծու զորությամբ»* (Ծննդ. Գ 21, 24, Դ 1):

Այսուամենայնիվ, բուն իմաստով չենք տեսնում նախածնողներին լքված, մոռացված կամ մեկուսի: Նրանք շարունակ Աստծո հոգածության մեջ են՝ երեքով կամ չորսով...

Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԿՐՏՈՒՉ ՆԱՂԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիզբը՝ թիվ 11

Նաղաշը նույնպես ունի բանաստեղծություն, որտեղ, ինչպես Նարեկացին «Մատյանում», ներկայացնում է իր մեղքերի մեջ թաղված լինելը, մաքրման, կատարելագործման ձգտումը *(Կ. Կոստանեանց, Մկրտիչ Նաղաշը եւ իր տաղերը, Վաղարշապատ 1898, էջ 21).*

Գերի Նաղա՛շ, ողորմելի՛, ի քեզ հայեա՛ց դու յարաժամ,
Զինչ որ այլոց քարոզեցիր, ամէնն քեզ կայ ի լման:
Մի համարիր զազգս մարդկան, քան զքեզ եղաւ ամբարտաւան,
Զինչ որ յաշխարհս կայ մեծութիւն, զամէնն քեզ կամիս միայն...
Աղուոր զմիտքդ ժողովէ, որ այդկից այլ չելնես ունայն,
Զնաւդ ի բեռաց թեթեւացո՛ւ, որ հասանիս ի յօթեւան...

Նաղաշի ստեղծագործությունների վրա մեծ են հատկապես Կոստանդին Երզնկացու եւ Ֆրիկի ազդեցությունները, որոնք ավելի աշխարհիկ թեմաներ են արծարծել: Այսպես, Կ. Երզնկացու «Տաղ գարնան եւ ուրախութեան» տաղի նմանողությամբ, Մ. Նաղաշը գրում է իր «Տաղ հարսանեաց եւ ուրախութեան մարդկան» բանաստեղծությունը: Երզնկացին գրում է *(Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Եր. 1962, էջ 83).*

Ահա հոտն գար գարնան,
Իւր տեսն երեւեր խնդման.
Զինչ պարտեզ եւ այգեստան,
Ծաղկունք գոյնզգոյն բացուան...

Կամ՝

Այսօր է մեղ, օր խնդման
Հաւասար սիրելեացդ որ կան,
Զինչ սիրտ որ սիրով բացան,
Այսօր միատեղ նըստարան:

Նաղաշը գրում է հետեւյալը.

Ահա հոտն գայր գարնան,
Փեսին տեսներ խիստ խնդման.
Յորտեղ սիրելիք որ կան,
Ամէնքն ի հարսնիք թող գան...

Եվ *(Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, էջ 101)՝*

Այսօր է մեզ օր խնդման
Հաւասար սիրելիք որ կան,
Հարս են առեր ու կերթան,
Թող երկունքն յիրար խընդան:

Նաղաշի ու Ֆրիկի ոճական համընկնումն արդեն ոչ թե մեկ-երկու տողերի համընկնում է, այլ գաղափարական հիմքեր ունի: Ինչպես Ֆրիկի, այնպես էլ Նաղաշի համար ստեղծագործության նյութ է դառնում սոցիալական եւ խրատական մոտիվը: Նաղաշին այնքան էլ չի գրավում սիրո, բնության եւ զվարճանքի երգը, որքան ժողովրդի քաղաքական, սոցիալական ծանր կացությունը: Նա շարունակում է Ֆրիկի ավանդները, գրում է խրատական-բարոյական թեմաներով տաղեր, որը նաեւ միջնադարի նախասիրած մոտիվներից էր:

Հովհաննես Թլկուրանցու հետ առնչությունները հատկապես վերաբերում են մահվան մոտիվով գրված բանաստեղծություններին: Երկու հեղինակների համար էլ մահը սարսափ է, լեղի է: Նաղաշն էլ Թլկուրանցու նման մտածում է մահվան մասին՝ այն պատկերելով որպես ամենադառը կսկիծը մարդու համար, որ լացացնում է սարին ու ձորին, ծառերին ու ճյուղերին:

Մահվան, պանդխտության դեմ գրված բանաստեղծություններից մի քանիսի վրա էլ առկա է բանահյուսական, ժողովրդական երգերի ազդեցությունը: Այսպես՝ կռունկի, կաքավի, «բլբուլի» ու այլ թռչունների միջոցով սեփական կարոտն ու զգացմունքները արտահայտելու մոտիվը գալիս է բանահյուսությունից եւ փոխանցվում է նաեւ Նաղաշին:

Բնության եւ սիրո մոտիվներով գրված տաղերում ի հայտ են գալիս բանաստեղծի լավատեսությունը, սերն ու ջերմությունը դեպի բնության գեղեցկություններն ու երեւույթները: Նաղաշի՝ այս մոտիվով գրած տաղերից մեզ են հասել «Տաղ հարսանեաց եւ ուրախութեան մարդկան», «Տաղ Վասն վարդին եւ բլբուլին», որոնք հավանականությամբ գրվել են բանաստեղծի կյանքի առաջին շրջանում:

«Տաղ ի դէմս մարգարէիցն եւ Քրիստոսի եւ Լուսաւորչին» բանաստեղծության վերնագիրը կարդալիս պատկերացնում ենք, որ այն պետք է կրոնական մոտիվներով հյուսված ներբող լինի: Մինչդեռ բանաստեղծությունն ամբողջությամբ ասես բնության գովերգմանն է նվիրված: Սակայն դա՝ առաջին հայացքից: Ամբողջ բանաստեղծությունը ասես գեղեցիկ, հոտավետ ծաղիկների գովք է, սակայն այդ ծաղիկների մեջ նախապատվությունը տրվում է ծաղիկներից այն մեկին, որը կարծես թե մյուս ծաղիկներից առավել է: Այլաբանորեն գովելով «Հիսուս» ծաղկին՝ Նաղաշ հայտնում է, որ ամեն ծաղիկ խոնարհվում էր նրա առաջ *(Կ. Կոստանյանց, Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը, Վաղարշապատ,1898,էջ 29).*

Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն
Շաղ առին ու շողշողային.
Ամէն ծաղիկն իւր գունովն
Այն ծաղկին գլուխ դնէին:

Այս ծաղկի շուրջն են հավաքվել մյուս բոլոր ծաղիկները, որ «շաղ առին ու շողշողային»: Այս ծաղկի գեղեցկությունից մյուսների հոգիները խինդով են լցվում *(նույն տեղում, էջ 29–30)*:

Ծաղիկն յանց դեղ գնաց
Որ ամէն ծաղկունք խընդային
Հազար գոյնզգոյն ծաղկունք
Յայն ծաղկի սէրըն ժողովին:
Ծաղկունք յայն ծաղկի սիրուն
Շաղ առին ու շողշողային...

Ինչպես միջնադարի բոլոր բանաստեղծները, այնպես էլ Նաղաշը, դեպի բնությունն ու աշխարհիկ կյանքն ունեցած սերն ու հիացմունքն արտահայտում է կրոնական թեմաների միջոցով: Սակայն Նաղաշի յուրահատկությունն այն է, որ ինչպես այս, այնպես էլ այս շրջանի մյուս բանաստեղծությունների մեջ եկեղեցական, կրոնական գրականության մեջ տարածված հին թեմաները մեկնաբանվում են նոր ոճով եւ ձեւով՝ դրանք կապելով սոսկ մարդու ապրումների, զգացմունքների, հույզերի ու ձգտումների հետ:

Շարունակությունը՝ էջ 8

ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԵՐ

Լուրոյն ու հետաքրքիր մի աշխարհ է բովանդակում Երեւանի Կոմիտաս եւ Վաղարշյան փողոցների հատույթի անկյունային շենքի ներքնահարկի արվեստանոցը:

Արդեն շուրջ կես դար այստեղ է ստեղծագործում Երեւանի գեղարվեստի ակադեմիայի քանդակի ամբիոնի պրոֆեսոր, վաստակաշատ քանդակագործ Տարիել Հակոբյանը:

Ճշմարիտ է՝ աշխատանոցն արտաքուստ, առաջին տպավորությամբ համեստ է, սակայն այն հարուստ է ներքին բովանդակությամբ, ինչպես կյանքում մեզ՝ ոչ հաճախ հանդիպող այն մարդիկ, որոնք իրենց համեստ հագուկապի ներքո հոգու անբավ հարստություն ունեն, խորունկ մտքերի գանձարան եւ մեծ կուլտուրա…

Անվանի քանդակագործի արվեստանոցը, գոնե իմ սուբյեկտիվ ընկալմամբ, հենց այդպիսին է եւ ունի երեք հատկանշվող առանձնաշնորհ-բաղադրիչ: Առաջինը, իհարկե, շարվեշար դասավորված հարյուրյակի քանդակներն են, մանրակերտերն ու էսքիզները, երկրորդը՝ մասնագիտական (եւ ոչ միայն…) հարուստ գրադարանը, եւ երրորդը՝ աշխատանոցի հատակի… տախտակը: Այո՛, այո՛, հիանալի պահպանված դարավոր տախտակածածկը, որը մեր պատմական Սարիղամիշի անտառների նշանավոր շիմշատ ծառատեսակից է եւ այստեղ է բերվել քանդակագործի հայրենի Ալեքսանդրապոլի հնագույն այն շենքի բեմահարթակից, ուր 1912-ին առաջին անգամ բեմադրվեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան:

Հանրածանոթ պատմական դեմքերի, դասականների եւ ժամանակակիցների մի ամբողջ պատկերասրահ է այստեղ: Արվեստանոց այցելողի հայացքն ակնբախորեն փակչում է ականավոր գործիչների, մերօրյա ճանաչված մարդկանց բարձրարվեստ եւ ուշագրավ դիմաքանդակներին: Խորին պատկառանքով են դիտվում մեծ հումանիստ, հայ ժողովրդի իրական բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի, մեծահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի, Վեհափառ Վազգեն Առաջինի, հանճարեղ բանաստեղծ եւ գրականագետ Պարույր Սեւակի դիմաքանդակները: Ի դեպ, դժնդակ այն օրը՝ 1971 թ. հունիսի 17-ին, Տարիել Հակոբյանին է վստահվել հանել ավտովթարից զոհված սիրելի բանաստեղծի գիպսե դիմակը…

Բրոնզե դիմաքանդակների շարքը շարունակում են անվանի գիտնական Պարիս Հերունու, բանաստեղծներ Հրաչյա Հովհաննիսյանի եւ Ռազմիկ Դավոյանի, ֆրանսահայ նշանավոր պատմաբան եւ մաթեմատիկոս Արմեն-Կլոդ Մութաֆյանի, սփյուռքահայ գրող եւ բժիշկ, 90-ամյա Թորոս Թորանյանի դիմաքանդակները, որոնք արվեստագետն անմիջականորեն կերտել է բնորդներից:

Արվեստանոցի մի հատվածում էլ քանդակագործի շնորհալի որդին՝ Գուրգեն Հակոբյանն է ստեղծագործում: Երիտասարդ արվեստագետն առավելաբար նվիրվել է բժշկագիտության, գրականության, մշակույթի ականավոր գործիչներին՝ Մխիթար Հերացու, Թումանյանի, Կոմիտասի, Շոստակովիչի, Բաբաջանյանի, Մանսուրյանի եւ այլոց հուշամեդալները կերտելուն, արել է նրբին ու ճաշակավոր ուրիշ շատ գործեր, որոնք ճանաչման եւ հատուկ մրցանակների են արժանացել:

Տարիել Հակոբյանը, արդարեւ, ստեղծագործական արգասավոր ուղի է անցել: Լայն եւ ընդգրկուն են նրա թեմաներն ու սյուժեները: Անցած ավելի քան հինգ տասնամյակներում արձանագործի կերտած հուշարձանները պատվանդան են բարձրացել Երեւանում, Գյումրիում, Արտաշատում եւ Հայաստանի այլ բնակավայրերում, Իրանի Փարդիզ, Ղազախստանի Ուստ-Կամենգորսկ, Ակտյուբինսկ, Ռուսաստանի Դաշնության Իրկուտս, Դոնի-Ռոստով, Կրասնոդար եւ այլ քաղաքներում: Զանազան ցուցահանդեսներում նրա քանդակարվեստային աշխատանքները պատեհություն են ունեցել դիտելու նախկին ԽՍՀ Միության, ԳԴՀ-ի եւ մի շարք այլ երկրների արվեստասերները:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյան

Բնապարգեւ տաղանդ, ակտիվ խառնվածք ունեցող քանքարավոր արվեստագետը մանկավարժական երկարամյա, շնորհակալ աշխատանքին զուգընթաց՝ այժմ էլ ստեղծագործում է երիտասարդական ավյունով: Քանդակագործին առանձնապես ներշնչել են բացառիկ ոգեղենությամբ օժտված, հայ մշակույթի, մեր պետականության եւ ժողովրդի ճակատագրում խոր հետքեր թողած երախտավորների կերպարները՝ Կոմիսաս, Եկմալյան, հայոց մեծագործ Արտավազդ եւ Տրդատ արքաներ, Զորավար Անդրանիկ, Գարեգին Նժդեհ եւ այլք, որոնց պատկերավորումներում առկա է հեղինակի իրատեսական եւ միաժամանակ ռոմանտիկ պաթոսով առլեցուն անհատական բացահայտումների՝ վերուստ ընծայված դրոշմը:

Տարիել Հակոբյանի վերջին երկու-երեք տարվա ստեղծագործական ոգորումների արգասիքը եղան ռուս գրականության դասական Ալեքսանդր Պուշկինի, 19-րդ դարի Ռուսաստանի պետական եւ ռազմական գործիչ, հայ ժողովրդի նվիրյալ զավակ Կոմս Լոռիս Մելիքովի կերպավորումները: Արձանագործը երկուսին էլ քանդակել է ձիու վրա՝ կենդանի, աշխույժ, դինամիկ կեցվածքով: Եթե գեներալ-ադյուտանտը պատմական հայրենիքի՝ Արեւմտյան Հայաստանի մի մասի ազատագրումից հետո բազմախոսուն հայացքը հառել է հայրենի հեռավոր հորիզոններին, ապա բանաստեղծը, թիկնոցը հողմին հանձնած եւ նիզակը առաջ պարզած, սրընթաց արշավում է ռուս-թուրքական ռազմաճակատ՝ դեպի Կարին-Էրզրում…

…Հիրավի, հրաշալի էսքիզային մտահղացումներ, որոնք կանաչ լույսի, ասել է թե՝ կյանքի ուղեգիր ստանալու պարագայում պատվանդան կբարձրանան եւ արժանավորապես կհամալրեն մեր երկրի հոյակապ մյուս «հեծյալների»՝ ձիարձանների շարքը:

Տասնամյակների գործով ու փորձով հմտացած քանդակագործը հոգու ու սրտի մի առանձնակի սիրով վերջերս կերտեց մեզ միայն զարմանք ու հիացմունք պատճառող բազմաբեղուն բանասեր, պատմաբան, ձեռագրագետ, մշակութաբան, հնագետ, փիլիսոփայության եւ աստվածաբանության դոկտոր, Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչ ու ոգեշնչող, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի հուշարձանը: Մեծն հայկազունի լուսավոր կերպարը խորապես է ոգեշնչել արվեստագետին: Բացառիկ մեծագործ ու բազմատաղանդ այր, որը վաղուց անտի կերտել է իր աննյութական պատվո պատվանդանը: Մնում է, որ մենք՝ երախտագետ սերունդներս, արժանավոր հայորդու արդեն իսկ կերտված կոթողը իրական-առարկայական պատվանդանի բարձրացնենք…

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԿՐՏՈՒՉ ՆԱՂԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիզբը՝ էջ 7

«Տաղ ի դէմս մարգարէիցն եւ Քրիստոսի եւ Լուսաւորչի» բանաստեղծության մեջ Նաղաշը հետապնդում է ժողովրդին դաստիարակելու, նրա հասարակական վիշտը մեղմելու, մխիթարելու նպատակ: Ուստի, մոռանալով իր ստեղծած այլաբանությունը, ծաղիկների մեջ տեսնելով մարդկային բարի ու չար, առաքինի ու ոչ առաքինի, անցավոր ու մնայուն հատկություններ, ելնելով իր կրոնական աշխարհայացքից, խրատում, սովորեցնում է կյանքում բարի գործ կատարել եւ բարի համբավ ձեռք բերել, հասարակությանն օգտակար լինել եւ այլն:

Այս խոսքն ու խրատը բանաստեղծը փորձում է տարածել իր միջոցով: Տաղի մեջ խրատն ուղղված է հենց իրեն՝ Նաղաշին, հենց իր անձի միջոցով է նա խրատում լինել ոչ թե «հանցեղ ծաղիկ», այլ բարի գործ կատարել եւ լինել բարեգործ ծաղիկ, որպեսզի ոչ թե քշվես քամուց ու հողմից, այլ կարողանաս պտուղներ տալ *(նույն տեղում, էջ 30)*.

Նաղաշ, թէ խելք ունիս,
Միտ արա դու գարնան ծաղկին...
Հանցեղ ծաղիկ մի՛ լինիր,
Որ տանէ զքեզ հողմն ու քամին,
Ծաղիկ լեր բարի գործով,
Որ պտուղ տաս դու հոգւով...

Բնության եւ սիրո մոտիվներով գրված հաջորդ տաղը «Տաղ հարսանեաց եւ ուրախութեան մարդկան» բանաստեղծությունն է: Բանաստեղծության տների սկզբնատառերով կազմվում է «Նաղաշ սարկավագայ է սայ» ծայրակապը: Այն գրվել է Նաղաշի սարկավագության տարիներին՝ մոտավորապես 1410-ական թվականների վերջերին: Այս տաղը զուտ աշխարհիկ է, ինչով էլ բացառիկ նմուշ է թե՛ Նաղաշի գրական ժառանգության, թե՛ ժամանակի հայ գրականության մեջ:

Տաղ ուրախության, խինդ ու ծիծաղի, վերելքի առաջին երգն է, որտեղ բանաստեղծն օրհնում է Աստծուն՝ աշխարհում առաջին զույգին՝ Ադամին եւ Եվային ստեղծողին: Հետո արդեն իր ստեղծած զույգին է ներկայացնում, որի հարսանյաց հանդեսն էլ դարձել է տաղի թեմա:

Լույսով, ուրախությամբ եւ թարմությամբ է ողողված այս բանաստեղծությունը: Թարմություն, որ բխում է տաղի մեջ պատկերված եղանակից: Գարուն, նոր կյանք, նոր սեր, հարս ու փեսա, կենացներ, երգեր, խինդ ու բերկրանք:



Հեղինակն ինքն էլ հարսանյաց տոնի մասնակիցներից է՝ հրավիրյալներից մեկը, որը նաեւ հանդես է գալիս հրավերք կատարողի դերում: Նաղաշը հրավիրում է բոլորին՝ ներկա գտնվելու հարսանյաց արարողությանը *(Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, Եր., 1965, էջ 101)*.

Յորտեղ սիրելիք որ կան,
Ամէնքն ի հարսնիք թող գան...

Ամեն ինչ պարզ է ու լուսավոր: Բոլորը երջանիկ են: Նաղաշի գրչի տակ բոլոր կերպարները կարծես թե սկսել են շողշողալ *(նույն տեղում)*.

Ղամպար է վառեր փեսայն,
Փեսաղբօր մոմըն վառման…
Առաւօտ ի լոյս նըման
Լուսափայլ կենաց փեսայն…

Այս պարզ ու լուսավոր տրամադրությունը փոխանցվում է նաեւ հեղինակին, եւ նա նույնպես սկսում է երգեր երգել ու խաղ ասել *(նույն տեղում)*.

Սարկաւագունք ժողվեցան,
Քո սիրուն եղեն գուսան:

Տաղում զետեղված կենացճառերն ավելի ժողովրդականություն են հաղորդում, ինչից էլ ստեղծվում է տպավորություն, թե ընթերցողն ինքն էլ է այդ հարսանիքին մասնակից, որ նա էլ նստած է այդ նույն վայրում, նույն սեղանի շուրջ, ինչպես տաղում հանդես եկող բոլոր կերպարները: Կարծես թե կայանում է իսկական հայկական ավանդական հարսանիք՝ իր ողջ ճոխությամբ, հմայքով, կենացներով եւ բարեմաղթանքներով: Ահա այդ խոսքերից մի քանիսը. «Թող երկուքն ծերանան», «Փեսաղբայր, հարսն ու փեսայն, թող երեքն յիրար խնդան», «Շատ ապրի հարս ու փեսայն, թող երկուքն յիրար խնդան», «Ծնօղն լինի շատ մանկան»:

Մարդկային առօրյա կյանքին ու հարաբերություններին զուգահեռ՝ բանաստեղծը նաեւ նկարագրում է բնության զարթոնքը: Գարունն իր գիրկն է առել հարյուրավոր երիտասարդների, որոնք ցրտաշունչ ձմռան օրերին երազել էին իրենց սրտի տիրուհիների եւ տիրակալների մասին: Եվ ահա սպասված օրը եկել է, ու նրանցից երկուսն արդեն ապրում են իրենց կյանքի գերագույն երջանկությունը: Բոլորի սրտերում խինդ ու սեր է, ուրախություն ու հրճվանք *(նույն տեղում)*.

Ահա հոտն գայր գարնան,
Փեսին տեսներ խիստ խնդման,
Յորտեղ սիրելիք որ կան,
Ամէնքն ի հարսնիք թող գան…

Բայց այս ընդհանուր ուրախության մեջ առանձնանում են հարսն ու փեսան: Նրանց երջանկությունն առանձնահատուկ է, նրանց համար այդ պահին բոլոր ներկաները դարձել էին սիրելի ու բարի:

Հետո արդեն բանաստեղծը մեր առջեւ բացում է հարսանեկան ողջ մանրամասնությունները՝ երգը, պարը, երաժշտությունն ու զվարճալիքները, որոնք համեմվում են ժողովրդական խաղերով, տաղիկներով ու հումորով:

Տաղի մեջ առանձնահատուկ ուշադրություն են գրավում բնության եւ մարդու փոխհարաբերությունները: Մարդկային կյանքի շատ երեւույթներ բանաստեղծը բացահայտում է բնության միջոցով: Ինչպես որ գարնանային անձրեւն է կենդանություն ու զարթոնք տալիս բնությանը, բուսականությանը, այնպես էլ բանաստեղծը ցանկանում է, որ այս ամուսնությունը նորապսակներին բերի երջանիկ կյանք՝ մանուկներով շրջապատված: Նաղաշն անձրեւն ու ամուսնությունը համեմատում է իրար հետ: Անձրեւի արդյունքում ծառեր ու ծաղիկներ, բույսեր են ծնվում, իսկ, ահա ամուսնության արդյունքում պետք է ծնվեն մանուկներ *(նույն տեղում, էջ 103)*.

Ամպն ի յերկինք թուխ դարձան
Զանձրեւ քաղցրահամ ցօղան,
Որ յերկիրս ծնանի,
Ծաղկունք զարդարեալ ցնծան:
Գովեմք զհարսն ու զփեսայն,
Սոքայ Յակոբայ նման.
Շայլայ ի միջոց խնդան
Ծնող լինին շատ մանկան…

Սա ամուսնության շնորհիվ կատարվող բեղմնավորման խորհրդանշական պատկեր է. անձրեւող երկինք–փեսան եւ ծաղիկ մանուկներ ծնող երկիր–հարսը: Նաղաշն իր ասելիքը համադրել է կրոնական տրամադրություններին: Հայտնվում է Հիսուս Քրիստոսի կերպարը, իջնում Հորդանան, մկրտվում Հովհաննես Մկրտչի ձեռքով, ապա օրհնում զույգին եւ հեռանում *(նույն տեղում, էջ 102)*.

Կանչեաց ահեղ բարձրաձայն
Այն տէրն Յիսուս արքայն՝
Կանայք շատ տղայք ծընան,
Չէ իմ կնքահօր նման:

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ **krishayas.wordpress.com**
Ստորագր. տպագր. 16.07.2019 թ.
Տպաքանակը՝ 1175